

Անակնկալ այց սահմանամերձ Խնձորուտի դպրոց,

05.03.2019



Վայոց ձոր այցի շրջանակներում պարտադիր ցանկանում էի լինել նաև դպրոցում: Այս իսկ պատճառով ուրբաթ առավոտյան, իմ խնդրանքով, մարզպետ Տրդատ Սարգսյանն ինձ ուղեկցեց սահմանամերձ Խնձորուտ գյուղի միջնակարգ դպրոց:

Մեծ բավականություն ստացա այցից, մասնավորապես, աշակերտների հետ շփումից (դպրոցն ունի 96 աշակերտ), սակայն, միաժամանակ, առերեսվեցի գրեթե այն նույն խնդիրներին, որոնք առկա են հատկապես հեռավոր գյուղական դպրոցներում՝ ուսուցչական կազմը համապատասխան մասնագետներով համալրելու անհրաժեշտությունից, աշխատանքի հեռանկարի բացակայությունից մինչև դասագրքերի որակի, կրթական ծրագրերի բարելավման հարցեր:

Ինչ խոսք, սահմանամերձ գյուղում ապրելու, ամենօրյա պայքար մղելու համար առանձնահատուկ հերոսություն և հայրենասիրություն է հարկավոր:

Մխիթար Հայրապետյան / Mkhitar Hayrapetyan (Ֆեյսբուքյան էջ)